Մանկական ճվիկներ, ասիկներ, խաղեր

Ճվճվիկներ

- ✓ Ծիլ, ծիլ, ծիլծիլա,

Ելեք, տեսեք՝ ո՞վ կուգա,
Պստի պապը տուն կուգա,
Չամիչ ուտելեն կուգա,
Ճանճը տզզալեն կուգա,
Ճնճուղը թը՛ռնելեն կուգա:

- ✓ Ճիվո՛ւ, ճիվո՛ւ, ճնճղիկ,

Թռավ, գնաց արվու եզրիկ,
Կերավ կտիկ, խմեց ջրիկ,
Թռա՛վ, մտավ Մարոյի ծոցիկ:

- ✓ Ճի՛վ - ճի՛վ ու ճի՛վ, ճըվճըվկան,

Թռավ, գնաց Հնդստան,
Կերավ կուտիկ, խմեց ջուրիկ,
Էկավ մտավ մամու ծոցիկ:

- ✓ Ճիվու, ճիվու, ճնճղիկ,
  Թռավ, գնաց առվի եզրիկ,
  Կերավ կուտիկ,
  Խմեց ջրիկ,
  Թռավ մտավ …-ի ծոցիկ:

- ✓ Ճվիկ-ճվիկ, Ակնա ճվիկ,
  Առվի եզրին նախշուն ճվիկ,
  Կուտ կերավ, կուտման կերավ,
  Կուտման առավ ու թռավ,
  Թռավ գնաց, գնաց մտավ ...-ի ծոցը՞...

- ✓ Ճվիկ, ճվիկ, Ակնա ճվիկ,
  Ճվիկ գնաց հեռու քաղաք,
  Բուրդ բերեց, բամբակ բերեց,
  Թել մանենք, գլխարկ գործենք,
  Մեր ...-ի գլխին կործենք:
  Թը՞ռռ ճվիկ:

- ✓ Ճվի~կ, ճվի~կ, ճկութիկ,

Երկեն տաճիկ, բարակ լաճիկ,
Ճվի~կ, ճվի~կ, ճկութիկ,

Ճվիկը թռավ մտավ …-ի ծոցը:

Ծափխաղեր –ձեռնախաղեր

- ✓ Ծափիկ-ծափիկ, ծափ նաներով,
  Փլավ կեփենք պուտուկներով,
  Գդալ չկա, շերեփ չկա,
  Մենք էլ կուտենք մատիկներով:
- ✓
  Ծափիկ, ծափիկ, ծափլատիկ,
  Չալ խնձորիկ, փշատիկ,
  Ծալիկ, մալիկ, ծուռ աքլորիկ,
  Ծկլակտուց, ծկլամերիկ,
  Կուտ ուտի, կուտման ուտի,
  Ծակ շերեփով ծիկրակ անի:

Խաղեր, խաղիկներ

- ✓ Ուրբաթ, շաբաթ, կիրակի,

Աղվեսն ելավ մարզանքի,
Ուստա փիսոն (Կարոն)կրակեց,
Աղվեսի փորը տրաքեց:

- ✓ - Ջու, ջու, ջու, ջու, հավերիս կուտ տամ, հավերս ինձ ձու տան: Ձուն տանեմ հովվին տամ, հովիվը ինձ գառ տա: Գառը տանեմ Աստծուն տամ, Աստված ինձ ախպեր տա:

- ✓ Ախպեր, ախպեր, ջան ախպեր,

Շաքար մաղեմ, կեր ախպեր,
Ինձ թև ու թիկունք ախպեր,
Դու բերդի պատին ախպեր,
Մեջքդ գոլստան, ախպեր,
Մեր տան մեջը խան, ախպեր,

- ✓ Ալ խնձորի ախպերս,

Շեկ շլորի ախպերս,
Կանաչ թզնի ախպերս,
Կարմիր նռնի ախպերս:

Ջրի մեջ լողանալու մանկական խաղերգ

Կլոր պար, մեջը՝ ծառ,

Նստիմ հովը՝ կթեմ կովը,
Զմփիկ զարկեմ՝ ընկնիմ ծովը:

Անձրևախափան մանկական խաղերգ

Անձրև՛, անձրև՛, մի՛ արի,
Ես գնում եմ բանջարի,
Չի՛ք, բաբալոշկա, չի՛ք, մամալոշկա:

Մանկական ասերգեր

- ✓ Ասեմ, չասեմ,

Լավ բան ասեմ,
Քթիդ խփեմ,
Քեզի խաբեմ:

- ✓ Բան ասեմ,

Բամբակ ասեմ,
Քնթիդ խփեմ,
Ձա՛ն, ջա՛ն ասեմ:

- ✓ Ելա երթիկ, վե՛ր – վե՛ր ընկա,

Խաչքը կոտրավ, ես ներս ընկա,
Գլորեցա, թնդիր ընկա,
Օխտը պուտուկ տոլմա կերա,
էլի ըսի՝ չրկշտացա:

Խաբեցի՛, խաբեցի՛,
Տարա բազար, ծախեցի՛,
Ծամոն առա, ծամեցի՛,
Քեզի չրտվեցի՛...

- ✓ ***Թռչկոտելով ասում են.***

- Քաչալը գնաց տանձի,
  Վախենամ՝ գլուխը խանձի,
  Գիշերը մտավ տեղերը,
  Կատուն կերավ պեխերը:

- ✓ **Երեխաները, ժամն իմանալու համար, մի ձեռքով գրկում են ծառի բնից ու, պտտվելով, ասում.**

-Ալաբուջի, ժամը քա՞նիսն է:

Կրկնվում է մի քանի անգամ:

- ✓ Ծափին, ծափին, ծափ նաներով,

Փլավ կեփեմ պուտուկներով,
Գդալ չկա, լավաշ չկա,
Մենք ա կուտենք մատվընեռով:

- ✓ Ճրզ, վրզ, ճախարակ,

Ես հաստ մանեմ, դու՝ բարակ:

- ✓ Ճրզրը, վրզրը, ճախարակ,

Ես հաստ մանեմ, դու՝ բարակ:

- ✓ Զունն էկավ քուլա - քուլա,

Պապն ասեց. - Դանեն ու՞րա:
Գելն ասեց. – Հրես՝ տարա:
Շունն ասեց. – Հրես՝ բերի,
Պոչիկ թուլա,
Մեղրը կերար, պուլիկս ո՞ւր ա:

- ✓ Այս խաղը խաղում են մատներով, խաղացողներից մեկը ձեռքի մատներով «թոնիր» է ցուցադրում և կրծքի ուղղությամբ պահում: Մյուս խաղացողը, մատը դնելով նրա ճկույթների միացրած տեղին, սկսում է, վերջինս էլ պատասխանում է: Հերթով հարցնելով վերև է բարձրանում, հասնում են ցուցամատներին, որի վերջին պատասխանը լսելով, դիմացի խաղացողն անսպասելի ծափ տալով նրա դեմքի մոտ՝ ասում է վերջին արտահայտությունը:

Զունն էկավ քուլա - քուլա,
Պապն ասեց. - Դանեն ու՞ր ա:
Գելն ասեց. – Հրես՝ տարա:
Շունն ասեց. – Հրես՝ բերի,
Պոչիկ թուլա,
Մեղրը կերար, պուլիկս ո՞ւր ա:
- Ընկավ թոնիր:

- Բա չհանեցի՞ր:
- Վախեցա մտնեմ:
- Դե փախի, գնա:

Հաշվերգ (պահմտոցի խաղալու համար)

- ✓ Տիտոխիկ, տիտմարոխիկ,

Զուռնափչիկ, Թուխ Մանուկիկ,
Էփե գաթա ու կուլուճա,
Եղը վրեն կըպըճպըճա,
Ուտա իդա, խմա իդա,
Էլնա ինա:
-Վի՞ր տուն իջնա:
-Նուբարի տուն:
-Էս՝ Նուբար,
Էս՝ կատուն,
Էս՝ մուկիկ,
Էս՝ լորիկ,
Թռավ, գնաց՝ թը՛ռ, թը՛ռ, թը՛ռ:

Թուխ Մանուկ - առասպելական ոգի, քաջության և առաքինության հովանավոր:

- ✓ Էկե, դուկե, տըմըզա,

Թալան չուկե պուպուզա,
Մախտե կոճակ, դան պոլոճակ,
Ճան, ճուկ:

- ✓ Ուկլ, դուկլ, չամա, չուկլ,

Հա՞վ, թե՞ կոճակ,սև պոլոճակ,
Սև հավի վիզ կտրեմ, թալեմ:

- ✓ Ըստում, ընդում,

Դեղին դդում,
Գցեմ, բռնեմ,
Գտնեմ ուտեմ,
Պապոնց տանը
Տիտիկ անեմ:

Թռնոցիներ

- ✓ Թռի, թռի, թռցնեմ,

Սև հավի միս կերցնեմ,
Կարմիր գինի խմցնեմ,
Հով ծառի տակ քնցնեմ:

- ✓ Հա թռի, թռի, թռցնեմ,

Չիր ուչամիչ կերցնեմ,
Մեղր ու կարագ կերցնեմ,
Աղբրրի ջուր խմցնեմ,

Հա թռի, թռի, չուր ի լուս,
Պապեն գիկա կենա դուս:

- ✓ Ծիվ, ծիվ, մատնոցի,

Սև ագռավին բռնեցի,
Յուղով, մուղով տապկեցի,
Սատանային կերցուցի:
Թը՛ռռռռռ…

- ✓ Թռի, թռի, թիթեռնիկ,

Եկեղեցու ծիծեռնիկ,
Խաչ պատուհան կուտ քաղե,
Ավազանի ջուր խմե:
Վարդի դաստա խորոտիկ,
Ռեհանի փունջ մորոտիկ,
Քեզմեն առնեմ հոտհոտիկ,
Իմ սիրունիկ աղունիկ:

- ✓ Պա՛ր, պա՛ր, կլոր պա՛ր,

Արշակ, արի Նունիկին տար, (Անուշին, Մարոյին)
Պա՛ր, պա՛ր, չամչի պա՛ր,
Քեռին էկե, հոպբա տար, (Քեռի, արի, հոպբա, տար)
Շատ պստիկ է՝ մի տանի,
Կեցի մեծնա՝ հապա տար:

- ✓ Իմ աղջիկ

Խաս գարնցան իմ աղջիկ (քուրը),
Թան ու թացան իմ աղջիկ (քուրը),
Պստիկ բերան՝
Ժամտան խորան,

Մեղրե մատներ՝
Ժամտան մոմեր,
Մեջքիկ բարակ՝
Ժամտան դռնակ,
Երկան ծամեր՝
Ժամտան ավել:

- ✓ Կտուր, կտուր վարեցինք,

Սիրուն (մի լավ) աղջիկ ճարեցինք,
Գացինք, տեսանք՝ քնած էր,
Վարդն երեսին փռած էր:
Գաթեն ծոցին խեչած էր, (փխլած)

Նուռը ջեբին փնջած էր,
Գաթից մի լավ կծեցինք,
Վարդ երեսը պաչեցինք,
Պաչեցինք ու փախեցինք: (փախցրինք)

- ✓ Էսպես աղջիկ ո՞վ ունի,

Շորերով շապիկ ունի,
Մարգրտով կոշիկ ունի,
Մեյդանը հարսնիք ունի:

- ✓ Խաս գարնցան իմ աղջիկ (քուրը),

Թան ու թացան իմ աղջիկ (քուրը), (մաքուր թացան),
Պստիկ բերան՝
Ժամտան խորան,
Մեղրե մատներ՝
Ժամտան մոմեր,
Մեջքիկ բարակ՝
Ժամտան դռնակ,
Երկան ծամեր՝
Ժամտան ավել:

- ✓ Աղջիկ ունիմ օղերով,

Հարս պիտ անիմ քողերով,
Աղջիկ ունիմ հարսնացու,
Կտրիճ կուզիմ փեսացու,
Որի՞ն տամ, որի՞ն չտամ,
Հանիմ իշխան տղին տամ:

- ✓ Երեխային նստեցնել ծնկին ու, ոտքը վեր ու վար անելով, ասել.

Իմ աղջիկը խաս աղջիկ է,
Ջրի միջի թաս աղջիկ է,
Նստել է, խորոզ կփետտե,
Ոտներ վեր – վեր կնետե,
Ինչ կա, չկա՝ կլոփե,
Տատին կգա՝ աղջկաս կըթռցնե՛:
Թը՛ռռ...(Վերջին խոսքերի հետ երեխային ոտքի վրայից թռցնել գետնի վրա:)

Իմ աղջիկը խաս աղջիկ է,
Ջրի միջի թաս աղջիկ է,
Նստել է, խորոզ կփետտե,
Ոտներ վեր – վեր կնետե,
Ինչ կա, չկա՝ կլոփե,
Տատին կգա՝ դոմփ,
Օռիկուն կդմփե:

- ✓ Կլորիկ ու թմբլիկ եմ,

Պստլիկ ու ճստլիկ եմ,
Քիթս պուճուր – պուճուրիկ է,
Աչուկներս սևուլիկ են,
Կա՞ ինձ նման սիրունիկը:
Չկա, չկա, չկա:

- ✓ Ալ խնձորի իմ տղեն,

Շեկ շլորի իմ տղեն,
Կանաչ թզնի իմ տղեն,
Կարմիր նռնի իմ տղեն:

- ✓ Տղա ունիմ ազնավոր,(բեղերով)

Հարս կբերե քողերով,
Կանաչ վառած մոմերով,
Մերը կելնի խունկերով,
Հերը կելնի փնջերով.
Էկել են տղուս ձեն կուտան,
Դուռ ու երթիկ վար կուտան,
Կեցեք, ատլաս կապան հագնի,
Թելլի գոտին մեջքին կապի,

Հանդի լալա իմ տղեն,
Աչքը խումար իմ տղեն,
Բոյը չինար իմ տղեն:

Խաղի ավարտի ասերգեր

- ✓ Ծիտ, ծիտ, ծտաբուն,

Իփոր (երբ որ) մթնի՝ գնանք տուն:

- ✓ Ծիտն ուր բուն,

Լազլազ ուր բուն,
Խաչ - գավազան՝
Իմ քեռու տուն,
Մուկն ու կատուն՝
Ժամհարի տուն,
Էրեխեքն էլ՝
Ամենքն ուր տուն:

Ատամհատիկ

- ✓ Ատամհատիկ,

Սիրուն թաթիկ,
Ուտենք հատիկ,
Որ հեշտ դուրս գա
Քո ատամիկ:

- ✓ Հատիկ, հատիկ, ատամհատիկ,

Չալ խնձորիկ, փշատիկ,
Կուտ ուտեմ, կոտրեմ ուտեմ,
Պապոնց դռան տռճկեմ:

Տոտ արա

Տո՛տ, տո՛տ, տո՛տ արա,
Տոտիկներդ փոխ արա,
Կանաչ խոտիկ փոխ արա:

Մանկական խաղեր

- ✓ Մի քանի երեխա աղմկում են՝ ոտքերով խփելով գետնին: Ներկաներից մեկը կամ մի քանիսը հարցնում են.

- Ի՞նչ եք անում:
- Չարին ենք բռնում:
- Ի՞նչ եք անելու:
- Խելոքացնելու ենք:
- Բա որ չխելոքացա՞վ:
- Ուղարկելու ենք աշխարհի ծայրը:

- ✓ Խաղում են երկուսով: Խաղացողներից մեկը, ձեռքերի մատներն իրարից հեռացրած, մատների ծայրերն իրար հպած, կրծքից մի փոքր հեռու պահած՝ կանգնում է մյուսի դիմաց: Դիմացինը, մատը դնելով մյուսի ծկույթների հպված տեղին, ասում է.

- Նանե, նանե, կրակ տուր:
- Ելի վերի թաղեն(կրկնում է՝ մատը հերթով դնելով մատնեմատի, միջնամատի, ցուցամատի հպված տեղին).
- Հուդա ճնճուղ մի կար, ի՞նչ էղավ.
- Թռավ դիզու գլոխ.
- Դեզն ի՞նչ էղավ.
- Կով կերավ.
- Կովն ի՞նչ էղավ.
- Գել կերավ.
- Գելն ի՞նչ էղավ.
- Շուն կերավ.
- Շունն ի՞նչ էղավ.
- Դռան ետև կապուկ է.
- Խաց օր էպիկ, խո չխա՞ծե.
- Չէ, էպե.
- Կաթն օր դնիմ թունդիր, խո չթա՞փի.
- Նանե, նանե, կաթը թափավ: 237էջ, 238էջ օրորոցայինների մեջ

- ✓ Երեխաները բռնում են միմյանց ձեռքից և ուղիղ գծով կանգնում: Շարքի վերջում կանգնածներից մեկը մյուսին հարցնում է.

- Մամի, մամի, խաղողը հասե՞լ է:

Մյուսը պատասխանում է.

- Հասել է, հասմըսել է,

Շանը կտամ, գելին կտամ,
Քեզ մի ճութ չեմ տա:

- Ինչո՞վ գամ՝ որ տաս:

- Դհոլ - զուռնով:
Հարցնողն իր խմբով, դհոլի և զուռնայի ձայներին նմանեցնելով, որևէ երաժշտություն «նվագելով», շարքի առջևից գալիս և անցնում է պատասխանողի և նրա կողքին կանգնածի թևերի տակով: Երբ շարքը նորից շարվում է իր նախկին դիրքով, պատասխանողի կողքին կանգնածի դիրքը փոխվում է: Նրա ձեռքերը խաչված են, իսկ ինքը՝ շրջված հակառակ կողմ: Երկխոսությունը կրկնվում է մի քանի անգամ: Յուրաքանչյուր երկխոսության վերջում հանձնարարությունը տարբեր է լինում՝ ձիով, մեքենայով, թռչկոտելով, մի ոտքով թռնելով, ավանակով, հաց ուտելով (հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,) երգելով, գնացքով, զմփիկով, նապաստակի նման ցատկելով և այլն: Ամեն անգամ անցնում են արդեն շրջվածի և կողքին կանգնածի բռնած ձեռքերի տակով: Երբ անցնում են վերջին զույգի թևերի տակով, պատասխանողն ասում է.
- Մամին կասի՝ սխտոր ծեծեք:
Շարքը, բաց չթողնելով ձեռքերը, ռիթմիկ թռիչքներ է կատարում՝ բացականչելով.
- Չը՛խկ, չը՛խկ, չը՛խկ, չը՛խկ:
- Մամին կասի՝ լվացք ենք արել, պարանը կարճ է:
- Քաշենք՝ երկարի:
Երկու կողմից խաղավարները, որոնց կողմից է շարքի կեսը, նրանց հետ քաշում են այնքան, մինչև մեջտեղի կամ որևէ զույգի ձեռքեր իրարից բաժանվեն:

Նանի – նանի

ա. Խաղում են երկուսով: Խաղացողներից մեկը ձեռքերի մատները մի փոքր իրարից հեռացրած, ձեռքերի մատների ծայրերը պահում են իրար դիմաց և հպում իրար՝ պատկերելով թոնրի ձև: Մյուսը, ցուցամատը դնելով դիմացի խաղընկերոջ ճկույթների միացման տեղին, ասում է.
- Նանի, նանի, կրակ տուր:
- Ելի վերի թաղը (թարեքը, թառը):
Այսպես կրկնվում է՝ բարձրանալով մինչև ցուցամատ: Հասնելով ցուցամատին (թոնրի շրթին), ասում է.
- Նանի, նանի, որ կաթը դնեմ թոնիրը՝ տաքանա, հո շուն չկա՞:
- Չկա, չկա:
Խաղացողը ձեռքը՝ իբրև կաթ, իջեցնում է «թոնիրը»: Թոնիրը ցուցադրող երեխան արագ փակում է թոնիրը՝ ասելով.
- Հաֆ, հաֆ, հաֆ...

բ. Նույն խաղում են, վերջում ասելով.
- Հաց որ թխեմ՝ հո շուն չկա՞:
- Չկա, չկա:

«Հաց թխողը» ծափ է տալիս և աջ ձեռքով «հացը խփում» թոնրի աջ շրթին: Նույնը կատարում է՝ խփելով ձախ շրթին: «Թոնիրը», որսալով հարմար պահ, արագ փակվում է՝ բռնելով խաղացողի ձեռքը և ասում.

- Հաֆ, հաֆ, հաֆ:

գ. - Նանե, նանե, կրակ տուր:
- Ելի վերի թաղեն:
- Հուդա ճնճուղ մի կար, ի՞նչ էղավ.
- Թռավ դիզու գլոխ.
- Դեզն ի՞նչ էղավ.
- Կով կերավ.
- Կովն ի՞նչ էղավ.
- Գել կերավ.
- Գելն ի՞նչ էղավ.
- Շուն կերավ.
- Շունն ի՞նչ էղավ.
- Դռան ետև կապուկ է.
- Խաց օր էպիկ, խո չխա՞ծե.
- Չէ, էպե.
- Կաթն օր դնիմ թունդիր, խո չթա՞փի.
- Նանե, նանե, կաթը թափավ: 237էջ, 238էջ օրորոցայինների մեջ

✓ Մի քանի երեխա աղմկում են՝ ոտքերով խփելով գետնին կամ չարխափաններով շրխկացնելով: Ներկաներից մեկը կամ մի քանիսը հարցնում են.

- Ի՞նչ եք անում:
- Չարին ենք բռնում:
- Ի՞նչ եք անելու:
- Խելոքացնելու ենք:
- Բա որ չխելոքացա՞վ:
- Ուղարկելու ենք աշխարհի ծայրը:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:
- Մուկն ենք բռնում:
- Որ ի՞նչ անեք:
- Որ ուղարկենք:
- Ո՞ւր ուղարկեք:
- Մկստան:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:

- Ցուրտն ենք բռնում:
- Որ ի՞նչ անեք:
- Որ ուղարկենք:
- Ո՞ւր ուղարկեք:
- Իր երկիրը՝ հյուսիս:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:
- Ծուլությունն ենք բռնում:
- Որ ի՞նչ անեք:
- Որ ուղարկենք:
- Ո՞ւր ուղարկեք:
- Օվկիանոսի հատակ:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:
- Փնթիությունն ենք բռնում:
- Որ ի՞նչ անեք:
- Որ ուղարկենք:
- Ո՞ւր ուղարկեք:
- Խոզերի մոտ:

Նորից են աղմկում:

- Ի՞նչ եք անում:
- Անկարգությունն ենք բռնում:
- Որ ի՞նչ անեք:
- Որ ուղարկենք:
- Ո՞ւր ուղարկեք:
- Կապիկների մոտ:

Այսպես կարելի է շարունակել, մինչև կհոգնեն կամ կպարզեն, որ այլևս ոչինչ չմնաց քշելու: Կարելի է նշվածների փոխարեն այլ բաներ քշել, այն, ինչ ավելի հարմար կգտնեն: Կարող են քշել իրենց ընկերների վատ արարքները, իրենց համար դժվար, տհաճ և այլ երևույթները:

Խնոցին հա հարեմ

- ✓ Խաղում են զույգերով: Երեխաներից մեկը թեթևակի շալակում է մյուսին ու, գոտկատողից վերև ընկած հատվածով ռիթմիկ առաջ ու հետ շարժում կատարելով, ասում.

- Խնոցին հա հարեմ,

Շալակեմ՝սար հանեմ,

- Խնոցին հա հարեմ ,

Շալակեմ՝ գետն անցնեմ,

- Խնոցին հա հարեմ,
Շալակեմ՝ դաշտ տանեմ,
- Խնոցին հա հարեմ,
Կաթ ու մածուն կերցնեմ:
Կարելի է նույնն անել՝ ասելով.
-Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ:

«Մատներ»

Երկուսով կանգնում են իրար դիմաց: Երեխաներից մեկը ձեռքերից մեկով բռունցք է անում: Մյուսը, հերթով մատները բացելով, արտասանում է.
Բթամատն ասաց՝ գայլը եկավ:
Ցուցամատն ասաց՝ որտեղի՞ց եկավ:
Միջնամատն ասաց՝ սարիցն եկավ:
Մատնեմատն ասաց՝ եկեք փախչենք:
Ճկույթն ասաց՝ պստիկ եմ, ճստիկ եմ,
Ոտիկ չունեմ, ինչպե՞ս փախչեմ:
Երեխան, որի բռունցք արած ձեռքի մատներն արդեն բացվել են, ասում է.
- Ա՛յ, այսպես:
Եվ, դիմացի երեխայի թևի վրա, ցուցամատով և միջնամատով ցուցադրում է մատների վազք: Ապա միասին, նստարանի վրա, մատներով բեմականացնում են պար՝ պարային կամ ռիթմիկ երաժշտության նվագակցությամբ:

Ձեռնախաղ, «Ժնջիլ, ժնջիլ»

- Ժնջիլ, ժնջիլ, էստեղի խոտն ուր ա՞:
- Կովն ա կերե:
- Ժնջիլ, ժնջիլ, բա կովն ուր ա՞:
- Մորթեցի, կերա:
- Ժնջիլ, ժնջիլ , բա իմ փայ միսիկն ուր ա՞:
- Դրեցի լուսամուտ:
- Ժնջիլ, ժնջիլ, բա ուր ա՞:
- Կատուն էկավ ,տարավ, կերավ:
- Ժնջիլ, ժնջիլ , բա չկարեցա՞ր բռնես:
- Չէ:
- Դե ա՛ռ քու ձեռ, կորի՛ էստեղից:

Երեք լոբի

Հյուր գնացինք երեք հոգով,
Երեք հոգով,

Երեք հոգով:

Սեղան բացին երեք լոբով,
Երեք լոբով,
Երեք լոբով:

Երեք ուտող հսկա բերան,
Հսկա բերան,
Հսկա բերան,
Վրա պրծանք՝ հո չկերանք,
Հո չկերանք,
Հո չկերանք...

Ինչ համով էր և ինչ մսեղ,
Եվ ինչ մսեղ,
Եվ ինչ մսեղ,
Նման լոբի ո՞վ էր տեսել,
Ո՞վ էր տեսել
Ո՞վ էր տեսել...

Երեք ուտող հսկա բերան,
Հսկա բերան,
Հսկա բերան,
Վրա պրծանք՝ հո չկերանք,
Հո չկերանք,
Հո չկերանք...

Երբ վերկացանք մենք երեքով,
Մենք երեքով,
Մենք երեքով,
Անց էր կացել ճիշտ երեք օր,
Ճիշտ երեք օր,
Ճիշտ երեք օր...

Երեք օրում երեք հոգի,
Երեք հոգի,
Երեք հոգի,
Հազիվ կերանք երեք լոբին,
Երեք լոբին,
Երեք լոբին:

Երեք ուտող հսկա բերան,
Հսկա բերան,
Հսկա բերան,
Վրա պրծանք՝հո չկերանք,

Հո չկերանք,
Հո չկերանք...